




ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

21 ԳԵՎԵՍԵՄԱՆԻ, 2015 թ.
№ 15 (985)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաբերթ • հրատարակման 50 -րդ տարի

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ



Յուրաքանչյուր անցնող տարի բազմաթիվ հաջողությունների ու ձեռքբերումների ամփոփման եզրագիծ է, երբ մի պահ կանգ ես առնում հնի ու նորի սահմանագծում՝ խորհելու դժվարությունների հաղթահարման գնով իրականացրած երազանքների, մտահղացումների ու տարբեր ծրագրերի մասին: Ձեռք բերածով հպարտանում ես, բայց ոչ բավարարվում՝ ձգտելով նորին, առավելին...Եվ այսպես անեն տարի...

Յուրաքանչյուր նոր տարում փորձում ես նորովի բացել գեղեցիկ ապրելու բանաձևը. բարության ու հույսի շողերով ջերմություն սփռել շրջապատում, մարդկային որակական հատկանիշներով վեր կանգնել առօրյա կեղծիքներից, լինել ավելի բարեսիրտ, բարեկիրթ ու ազնիվ:

Եկեք հրաժեշտ տանք հինի, մոռանանք անհաջողությունների մասին, վանենք մեզնից վատ մտքերը, չարության դեմ պայքարենք բարությանը, հավատարիմ լինենք մեր առաքելությանն ու կոչմանը, կարողանանք ուրախանալ կողքինի հաջողություններով և օգնել շրջապատի մարդկանց՝ հաղթահարելու դժվարությունները: Մեր ապրելու կերպը դարձնենք օրինակելի այլոց համար, որպեսզի Հայրենիքը մեզ համար դադարի սոսկ տարածություն չլինի, որպեսզի մեր հոգևոր արժեքները չկորցնենք նոր դարաշրջանի գլոբալ մտածողության տիրույթներում:

Ընտրիավոր Սուրբ Ծնունդ և Ամանոր:
Թող բոլորիդ ուղեկցեն հաջողությունն ու երջանկությունը, թող խաղաղությունը թևաճի բոլորիդ ընտանիքներում՝ կամրջելով անցյալի ու ներկայի լավագույնն ու գեղեցիկ պահերը՝ լուսավոր ապագայի ակնկալիքով:

21-րդ դարում գիտելիքն առաջնային է

Մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետը գեղեցիկ նախաձեռնությամբ բարձր դասարանների աշակերտների շրջանում իր մասնագիտությունների հանդեպ հետաքրքրություն առաջացրեց: Ֆակուլտետի դեկանի տեղակալ Սամվել Պողոսյանի նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով կազմակերպվեց առարկայական օլիմպիադա, որին մասնակցեցին երևան քաղաքի 20 դպրոցների 54 աշակերտներ: Հարցաշարերը կազմվեցին 11 և 12-րդ դասարանների ծրագրերին համապատասխան՝ թեստերի ձևաչափով:

Ինչպես նշեց ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը, օլիմպիադայի անցկացումը մի քանի նպատակ էր հետապնդում. աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել պատմություն առարկայի հանդեպ, տալ թեստային աշխատանքի փորձառություն ձեռք բերելու, ինչպես նաև մանկավարժական համալսարան դիմելու ցանկություն ունեցողներին՝ ընդունվելու դեպքում ուսման վարձերի գեղչերից օգտվելու հնարավորություն: ➤7



ԼԱԶԱՐՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ 200-ամյա պատմությունը



Պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը դարեր շարունակ սփռվել է աշխարհով մեկ՝ աշխարհի տարբեր ծագերում հիմնելով իր գոյության առիվատյան հանդիսացող դպրոցներ, եկեղեցիներ, պատմամշակութային կենտրոններ, որոնք մեծ դեր են ունեցել հայ ժողովրդի միավորման, հասարակական-քաղաքական և պատմամշակութային կյանքի կազմակերպման գործում: Դրանցից առավել ճանաչվածներից է Լազարյան տոհմի ստեղծած ճեմարանը, որը ժամանակին եղել է մտավորականների տարբեր սերունդների կրթական մտքի ձևավորման կենտրոն: ➤2



2015-Ի ՆԵՒՐԱԿԱՐԶ

Օ
Մանկավարժական համալսարանում բացվեց Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոն: Բացմանը ներկա էին Արմեն Աշոտյանը, ՀՀ ԿԳԼ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն Անահիտ Բախշյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուզաննա Մուրադյանը, Երևան քաղաքի հանրակրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանը, կրթության ոլորտի պաշտոնյաներ, դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ:

Նախարարը «Շախմատը դպրոցում» երկուսը հայկական կրթական համակարգի հաջողության լավագույն պատմություններից մեկը համարեց, և վստահեցրեց, որ նման տեսակի կրթական լայնամասշտաբ նախաձեռնությունը պատիվ է բերում երկրին՝ մեզ դարձնելով ավելի հպարտ և վստահ միջազգային տարբեր հարթակներում:

Օ
Այս տարի «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը դարձավ 50 տարեկան է:

Թերթի ծնունդը իրադարձություն էր բուհի կյանքում: Առաջին համարը լույս է տեսել 1965 թվականի մարտի 11-ին, որի առաջին խմբագիրը անվանի լեզվաբան Պետրոս Բեդիրյանն էր, այն ժամանակ Հայկական մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ:

Օ
Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի և Մանկավարժական համալսարանի ղեկավար Ռուբեն Միրզախանյանի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, ըստ որի, «Համալսարան-Գործատու համագործակցության կենտրոնի» կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում, նախատեսվում էր փոխադարձ աջակցություն և համատեղ փոխշահավետ ծրագրերի իրականացում՝ ուղղված ՀՊՄՀ ուսանողների, մագիստրոսների, շրջանավարտների, ասպիրանտների, հայցորդների աշխատանքային և մասնագիտական առաջընթացին:

Ռեկտորը հավաստագրեր հանձնեց



Համալսարանի ուսումնառության անձնակազմի և համահամալսարանական անբիոներին՝ մասնագիտական վերապատրաստման դասընթացներում ընդգրկված աշխատակիցներին վերապատրաստման հավաստագրեր հանձնեց բուհի ղեկավար Ռուբեն Միրզախանյանը: Նա շնորհավորեց ներկայներին և հույս հայտնեց, որ ձեռքբերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները կծառայեն աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելուն: Ռեկտորի կարծիքով՝ վերապատրաստումները կնպաստեն, որպեսզի մասնագետներն աջակցեն նաև դասախոսական անձնակազմին. տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման ժամանակներում դեռևս կան դասախոսներ, ովքեր ոլորտի առաջատար մասնագետներ են, սակայն հետ են մնում ժամանակակից մոտեցումներից և ունենում

որոշակի դժվարություններ վերջերս ուսումնական գործընթացում ներդրված նոր մեթոդների կիրառման ընթացքում:

Վերապատրաստված աշխատակիցները ներկայացրին գործընթացի վերաբերյալ իրենց դիտարկումները՝ հետազայում այլ խմբերի հետ աշխատանքում հաշվի առնելու և որոշակի լրացումներ կատարելու նպատակով: 36 ժամաքանակով երկշաբաթյա դասընթացները նպաստեցին օրենսդրական դաշտին, գնահատման նոր համակարգին և աշխատանքային այլ ուղղություններին վերաբերող գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը, որոնց շատ հաճախ բախվում են աշխատակիցները:

Մասնագիտական վերապատրաստումների դասընթացների 2 փուլերում ընդգրկվել են բուհի 55 աշխատակիցներ: Դասընթացները կլինեն շարունակական:



ԼԱԶԱՐՅԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ 200-ամյա պատմությունը

➤1 «Այս տարի նշվում է հայ դպրության զարգացման կարևորագույն կենտրոններից մեկի՝ Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակը: Այն իր մեկդարյա գործունեության ընթացքում բացառիկ ու կարևոր դեր է խաղացել հայագիտության, արևելագիտության, հայ դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման, հայ երիտասարդությանը ռուս և եվրոպական առաջավոր հասարակական-քաղաքական շարժումներին հաղորդակից դարձնելու գործում», - համալսարանի թանգարանի նախաձեռնությամբ

կապակցությամբ՝ պրոռեկտորը հայ դպրության ու մշակույթի զարգացման գործում կարևորեց Լազարյան տոհմի գործունեությունն ու դերը, անդրադառնալով հայ դպրոցի հազարամյակների պատմությանը՝ որպես հայ մշակույթի անբաժանելի մասի, որը բոլոր ժամանակներում եղել է հայ ժողովրդի մաքառման ու գոյության կռվի հուսալի պատվարը:

Այնուհետև ապագա պատմաբաններին Լազարյանների կյանքն ու գործունեությունը ներկայացրեց պատմական գիտությունների թեկնածու, դո-

կտոր Ջիգարխանյանի կերպարի միջոցով բացահայտել էր Լազարյանների գործունեության աննկարագրելի հետքը հայ ժողովրդի և ընդհանրապես գիտակրթական մտքի զարգացման ու պատմության համատեքստում:

Լազարյան ճեմարանն իր ժամանակին կրթել է մտավորականների մի ողջ սերունդ. այստեղ են սովորել ցար Ալեքսանդր 1-ը, Լև Տոլստոյը, Միխայիլ Գլինկան, Կոնստանտին Ստանիսլավսկին, Ալեքսանդր Մյասնիկյանը, Ռաֆայել Պատկանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը,

տավորները: Մեծ է Լազարյանների թողած հոգևոր-կրթամշակութային շահանգությունը, որը փաստում է հայ մտքի թռիչքների մասին: Լազարյանների արխիվը ցրված է տարբեր թանգարաններում, իսկ Երևանի Մատենադարանում է պահվում այսպես կոչված Լազարյանական Ավետարանը:

Մանկավարժական համալսարանի թանգարանում ցուցադրված նյութերը խոսում վկայներն էին Լազարյանների կրթամշակութային գործունեության: Այստեղ ուսանողները տեսան Լազարյանների տոհմական գերբը, տոհմաձառը, տեղեկացան հիմնադիրներ Հովակիմ և Հովհաննես Լազարյանների կյանքի ու հասարակական գործունեության մասին: Թանգարանում ցուցադրված էր Հայաստանի ազգագրության թանգարանի ֆոնդերից վերցված՝ Լազարյան ճեմարանի տարբեր տարիների շրջանավարտների և դասախոսների խմբանկարներ, հասունության վկայականներ, Լազարյանների հովանավորությամբ կառուցված եկեղեցիների և այլ լուսանկարներ, նաև ճեմարանի երկու մեդալների պատկերները, որոնցից մեկը՝ հիմնադիրների դիմապատկերներով, տրվում էր գերազանցիկ շրջանավարտներին, մյուսը՝ ճեմարանի շենքի նկարով, լավագույն շրջանավարտներին:

Այսպիսով, Լազարյանների պատմությանն ու գործունեությանը համագամանորեն ծանոթանալով՝ ուսանողները և մեկ անգամ համոզվեցին, որ դպրությունն է ազգի գոյապահպանության ամենաարժանահավատ երաշխիքը և հպարտության զգացողություններով լցվեցին հայազգի մեծերի հանդեպ:



ՀՊՄՀ թանգարանում Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված ցուցադրության բացման խոսքում ասաց ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը: Ցուցադրությանը ներկա պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին ողջունելով ձեռնարկի

ցենտ խաչատուր Ստեփանյանը:

Ձեռնարկն ամփոփվեց համալսարանի գիտական նիստերի դահլիճում, ուր դասախոսները և ուսանողները դիտեցին Ներսես Հովհաննիսյանի՝ Լազարյան ճեմարանի մասին պատմող «Հայկական նրբանցք, տուն 2» վավերագրական ֆիլմը:

Ֆիլմի հեղինակը հայ կինոյի իսկական խորհրդանիշ դարձած

Վահան Տերյանը, Եղիշե Թադևոսյանը, Վարդգես Սուրենյանցը և շատ-շատերը:

Հեղափոխությունից հետո՝ 1921 թվականին, Լազարյանների ճեմարան-արևելյան լեզուների ինստիտուտը վերածվել է Հայաստանի մշակութային տան, որտեղ հանդիպում էին Արամ խաչատրյանը, Պավել Լիսիցյանը, հայ մշակույթի ռուսական միջավայրում ապրող մյուս երախ-

2015-Ի ԱՆԻՐԱԿԱՐԶԸ

○ Գայոց Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ համալսարանի հեռուստառեժիսորական 4-րդ կուրսը, պրոֆեսոր Աիդա Յովհաննիսյանի ղեկավարությամբ, ներկայացրեց Յովհաննես Շիրազի «Գայոց Դանթեական»-ը՝ ռեժիսորի ընտրած պլաստիկ-երաժշտական լուծումներով և սինվոլիզմի գեղարվեստական արտահայտչամիջոցներով:

○ Գայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ռեկտորատի աշխատակազմը և ուսանողները, ավելի քան 5 հազար մարդ երթով այցելեցին Ծիծեռնակաբերդի համալիր՝ հարգանքի տուրք մատուցելու 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

○ Գայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված դասախոսությամբ բուհում հանդես եկավ քաղաքագետ, ԶՊՄԳ պատվավոր դոկտոր, ժողովրդավարության և համագործակցության ինստիտուտի Նյու Յորքի ներկայացուցչության ղեկավար Անդրանիկ Միրանյանը:

○ Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի և գիտական գրադարանի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում էին դարաբաղյան շարժման առաջնորդներից Մովսես Գորգիսյանի այրիին՝ Ռուզաննա Գորգիսյանը և թոռը՝ կրտսեր Մովսեսը: Առիթը հերոսի ծննդյան օրն էր, հանդիպման վայրն էլ պատահական չէր ընտրված. ժամանակին հենց Մանկավարժականում է Մովսես Գորգիսյանը ստացել բարձրագույն կրթություն՝ մասնագիտանալով ռեժիսուրայի բաժնում:

○ ԶՊՄԳ «Սփյուռք» կենտրոնում տեղի ունեցավ Վաչե Պարտիզուհու ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովը, որը նախաձեռնել էին ԶՊՄԳ ռեկտորատը, հայ մոր և մորազույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍԻ ՀԵՏ



«Երբ փոքր էի, տատս ինձ թուրքով էր վախեցնում. հանդգրված եմ՝ թշնամին հիմա իր գավակին հայով է սպառնում»,-տարիների հեռվից հիշում է Մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի իյուր Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը: Նա հպարտությամբ նշում է՝ հայ զինվորը քաջությունն իր գեների մեջ է կրում:

տարբեր տարիների ռազմական գործողություններից: «Շուշին ինչպես՝ ազատարեցիք» հարցը ոչ թե ինձ, այլ զինվորին տվեք, որի կողքին օրնիքուն նաև հասարակ ժողովուրդն է եղել և ուժերի ներածին

չափով սատարել ռազմի դաշտում գտնվողներին՝ մեզ հետ հավասար պայքար մղելով»,-ասում է Արկադի Տեր-Թադևոսյանը՝ վստահեցնելով, որ հայ ժողովուրդը զարմանալի ուժեղ ազգ է, պարզապես երբեմն շեղվում է ճիշտ ուղուց և վրիպում: Ազգային հերոսը տարբեր առիթներով և ձեռնարկների շրջանակներում շփվում է երիտասարդների հետ և ցավով է նկատում՝ ներկա կյանքը և ցանկությունները չեն համընկնում. նրանց համար ամեն ինչ հոգում են ծնողները, երիտասարդներն էլ ձգտում չունեն ապագայի հանդեպ: Պատերազմի բովով անցած հերոսը ներկաների խնդրանքով վերհիշեց նաև ռազմաճակատ կնոջ ուղարկած նամակը, որտեղ բացի զավակների և կնոջ ջերմ խոսքերից, կարևոր այլ բան կար՝ թշնամուն հաղթելու գծապատկեր: «Կամքն ու հայրենասիրությունը չեն կարող փառաբանվել,

եթե չլինեն խելացի առաջնորդներ և ռազմական գործիչներ, որոնց շնորհիվ մի բուռն արծիվներ դիպուկ հասել են նշանակետին»,-նշեց հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի վարիչ Մելս Մկրտումյանը՝ ուսանողներին հորդորելով օրինակ վերցնել միայն լավագույներից: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկավար Ռուզաննա Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց ռազմահայրենասիրական դասի համար՝ վստահեցնելով, որ հանդիպումը վաղվա զինվորների և մայրերի մեջ հայրենասիրական բարձր ոգի սերմանեց: Ուսանողները շնորհակալություն հայտնեցին Արկադի Տեր-Թադևոսյանին հայրենամարտի գործունեության համար՝ խոստանալով պահպանել նրա ոգու և արիությանը զինակից ընկերների արյամբ վաստակած անկախությունը:

Քրիստինե Մելքոնյան



Մովսես Գորգիսյան. «Ազգին ծառայելով է որոշվում ապագայունը»

Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի և գիտական գրադարանի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում էին դարաբաղյան շարժման առաջնորդներից Մովսես Գորգիսյանի այրիին՝ Ռուզաննա Գորգիսյանը և թոռը՝ կրտսեր Մովսեսը: Առիթը հերոսի ծննդյան օրն էր, հանդիպման վայրն էլ պատահական չէր ընտրված. ժամանակին հենց Մանկավարժականում է Մովսես Գորգիսյանը ստացել բարձրագույն կրթություն՝ մասնագիտանալով ռեժիսուրայի բաժնում: «Պատմության ողջ ընթացքում մենք ունեցել ենք հերոսներ, որոնցով ազգը որոշել է իր ճակատագիրը, եսթյունը, մտածել իր արմատներին. մենք հերոսների ազգ ենք: Զպարտության մի ամբողջ դաս ու տարածք է այն իրականությունը, որտեղ դուք՝ որպես անկախության սերունդ, ապրում եք»,- նշեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը ու հիշեց Վազգեն Վեհափառի հայտնի տողերը. «Լյն ազգը, որ չունի հերոսներ, չի գոյատևում»: Սա վերաբերվում է բոլոր նրանց, ովքեր գիտակցաբար գնացին իրենց անձի, կյանքի, ապագայի կորստյան ճանապարհով՝ ազգին ծառայելու համար»: Գանդիպման ընթացքում Մովսես Գորգիսյանի մասին զեկուցումով հանդես եկավ կրթության հո-



գեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողուհի Արուսյակ Գևորգյանը՝ ներկայացնելով նրա կենսագրությունը, անցած ուղին, հետաքրքիր դեպքեր Մովսես մարդու, հայի, հերոսի կյանքից: «Օրինյալ լինի ծնունդը Մովսես, քանզի դու այն երջանակահիշատակ մարդկանցից ես, ում ծննդյան օրն օրինյալ է ողջ հայության համար»,-հանդիպման ընթացքում նշեց Ռուզաննա Գորգիսյանը՝ նկատելով՝ Մովսեսն այսօր շատ ավելի ողջ է, օգտակար իր խորհուրդներով, քան շատերը, որ պարզապես ապրում են»: Մանկավարժական համալսարանում ընդունելության քննության ժամանակ կանգնեցին և միմյանց հավերժ կապված հերոսի կինն անկեղծաբար. «Մովսեսն իր համար մնաց ոչ միայն համակուրսեցի, դստեր հայր, կիսատ և

չապրած տարիների ընկեր, ամուսին, այլ և մարդ, ում ճանաչեց նրա երկնային կյանքի 26 տարիների ընթացքում... Գուցե սխալ վարվեցի այս տարիներին՝ «ապրելով» նրա հետ, սակայն Մովսեսն ինձ համար այդպես էլ չդարձավ հանգուցյալ: Նա այրեց 28 տարի, սակայն կրթեց մի ողջ սերունդ: Մանկապարտեզը, դպրոցն ու բուհը այն վայրերն են, որոնք ինձ ստիպում են երջանիկ զգալ... Իմ չապրած կյանքի, անձնական որբերության, լավագույն օրրանը դուք եք»: Ռուզաննա Գորգիսյանը նկատեց, որ չափազանց համեստ է եղել գնահատականներում, սակայն տարիների ընթացքում Մովսես Գորգիսյանի մասին ժլատ խոսքերը ստիպում են ըստ արժանվույն արտահայտվել նրա անձի մասին. «Ես ամեն օր կռվում եմ նրա հետ և պահանջ ունեմ

նրանից. նա պատասխան պետք է տա, որովհետև թափուր մնաց Մովսես Գորգիսյան քաղաքական, հասարակական, ազգային գործիչ, մարդու տեղը: Նա հայ ժողովրդի ամենավառ, բացառիկ, հայի հավաքական կերպար է, ով ծնվեց, մեծացավ ժողովրդի աչքի առաջ. նա նրանցից մեկն էր: Նրա անկեղծությունն էր, որ գնահատվեց: Վերջինս նշեց, որ Մովսես Գորգիսյանի երազած Զայաստանը մասամբ է իրականացել՝ որպես ազատ և անկախ պետություն, բայց այն հայրենիքը, որը պետք է լինի հզոր, արդար, իրավական՝ դեռ անելիքներ ունի, Մովսեսի և մեր երազած Զայաստանը կառուցելու համար. «Ազգին ծառայելով է որոշվում ապագայունը»,- մեջբերելով հերոսի խոսքերը՝ եզրափակեց Ռուզաննա Գորգիսյանը: Գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը Զորավար հիմնադրամի կողմից Մովսես Գորգիսյանին հետմահու պարգևատրեց «Զայ ժողովրդի վրիժառու բազուկ. Սողոմոն Թեխերյան» մեդալով՝ այն հանձնելով կրտսեր Մովսեսին: Ռուզաննա Գորգիսյանը շնորհակալություն հայտնեց հանդիպման համար և բարձր գնահատեց հարազատ կրթօջախի դրական փոփոխությունները:

Սարինա Արեգյան



2015-Ի ԼԵՒՐԼԿԱՐԶ

Մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի 33 ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտեի համատեղ նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում հունիսի 17-ին անցկացվեց «Մանկավարժության արդի խնդիրները. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով հանրապետական գիտաժողով: Գիտաժողովին մասնակցում էին կրթության և մանկավարժության ոլորտի առաջատար մասնագետներ, հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ, մագիստրոսներ, ասպիրանտներ, հայցորդներ Երևանից, Գյումրիից, Լոռուց և Արցախից: Գիտաժողովին ներկա էին 33 Աժ պատգամավոր Ռուզաննա Մուրադյանը, Երևան քաղաքի հանրակրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանը:

Մանկավարժական համալսարանի շրջանավարտները, ինչպես ամեն տարի, այս տարի էլ տոնական ջերմ մթնոլորտում հրաժեշտ տվեցին հարազատ բուհին: 2014-2015 ուսումնական տարվա 20 լավագույն շրջանավարտների՝ բակավարժի և մագիստրոսի դիպլոմներն անձամբ հանձնեց Աժ նախագահ և 3ՊՄ3 խորհրդի նախագահ Գալուստ Սահակյանը: Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին նաև 33 Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, ուսանողներ, դասախոսներ, հյուրեր:

Իսկ «Կրթության կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսներին ավարտական վկայականները հանձնեց ԱՄՆ-ի Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի հայազգի ռեկտոր Մարի Փափազյանը:

Արդեն երրորդ տարին իրականացվող «Ամառային դպրոց» փոխանակային ծրագրին այս տարի մասնակցում էին 85 ուսանողներ՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական, ԼԳՀ-ի Արցախի պետական, ՌԴ Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական, Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական, Լիտվայի կրթական գիտությունների, Ֆինլանդիայի Օուլոկի և Մաքսիմ Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարաններից: Ծրագրի շնորհիվ ուսանողները ծանոթացան մասնակից երկրների կրթական համակարգերին, քննարկեցին կրթության ոլորտին առնչվող տարատեսակ հարցեր, այցելեցին պատմամշակութային կոթողներ՝ ծանոթանալով Հայաստանի պատմությանն ու մշակույթին:

Ֆրանսահայ լոգոպեդը՝ Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ ժաննա Պալոյանի հրավերով երկօրյա դասախոսությունով բուհում հանդես եկավ Լիոնից ժամանած լոգոպեդ Աստղիկ Թոփուզխանյանը: Բազմիցս Հայաստան այցելած մասնագետն այս անգամ հանդիպեց հայաստանյան մասնագետների հետ՝ քննարկելով ոլորտին առնչվող մի շարք խնդիրներ: Աստղիկ Թոփուզխանյանը ներկայացրեց Ֆրանսիայի փորձը, առանձնահատկություններն ու մեթոդները և համեմատականներ անցկացրեց Հայաստանի հետ: Քիչ ծանոթ լինելով հայկական փորձին՝ լոգոպեդը նկատեց, որ հայաստանյան բժշկական հաստատությունները պետք է իրենց կազմում անպայման ունենան լոգոպեդներ: Մասնագետի կարծիքով որոշակի բացթողումներ կան նաև պրակտիկայի հարցում և բացի տեսական գիտելիքներից նաև շեշտը պետք է դնել գործնականի վրա: Աստղիկ Թոփուզխանյանը հավելեց նաև, որ իր կողմից մշակվել է հայ լոգոպեդների հետ վերապատրաստումներ իրականացնելու ծրագիր, որը նաև համագործակցության հնարավորություն կտա:

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ ժաննա Պալոյանն էլ նկատեց, որ լոգոպեդի մասնագիտությունը հիմնականում նույնացվում է դպրոցներում աշխատող մասնագետների հետ. ցավոք քչերը գիտեն, որ այն կարևոր դեր ու նշանակություն ունի նաև բժշկական հաստատություններում, որոնց մասնագետները կարծես ստվերում են մնացել և կազմակերպվող ձեռնարկներում չունեն ակտիվ դերակատարում:

Հանդիպումներին մասնակցում էին հանրապետության բժշկական և կրթական հաստատությունների, վերականգնողական կենտրոնների գործող մասնագետներ և Մանկավարժական համալսարանի ուսանողներ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ



Տեղեկարվական սեմինար

Օրերս 3ՊՄ3-ի միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը Erasmus+ Կրեդիտային շարժումության, Երազմուս Մուներուս համատեղ փոխանակման ծրագրերի վերաբերյալ անցկացրեց տեղեկատվական սեմինար, որին ներկա էին բուհի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ և հետաքրքրված այլ շահակիցներ:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանն իր խոսքում ընդգծեց բուհի միջազգայնացման գործում թեմայի կարևորությունը՝ նշելով, որ ներկայումս դա 3ՊՄ3-ի ռազմավարական կարևորագույն խնդիրներից մեկն է:

Քրիստինա Ծատուրյանը ներկայացրեց Կրեդիտային շարժումության ծրագրային հնարավորությունները կրթական հաստատությունների համար, հրապարակված առաջարկների մրցույթի վերջնաժամկետները, մասնակցության չափանիշները, պայմանները, ֆինանսավորման հարցեր: Բանախոսը ներկայացրեց նաև այն երկրներն ու բուհերը, որոնց հետ առավել նպատակահարմար է մշակել համագործակցային ծրագրեր, իսկ վիճակագրությամբ ցույց տվեց գործընկերներ գտնելու ուղիները:

Ամբիոններին առաջարկվեց նախաձեռնություն ցուցաբերել ծրագրերում ընդգրկվելու, գործընկեր, արտասահմանյան բուհերի հետ համատեղ ծրագրեր մշակելու ուղղությամբ:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը վստահեցրեց՝ նախաձեռնություն ցուցաբերելու դեպքում, բուհի ստորաբաժանումները, մասնավորապես միջազգային համագործակցության բաժինը, հնարավորինս կօժանդակի փոխանակման ծրագրի ընթացակարգերի կարգավորման հարցերում:

Հանդիպման մասնակիցները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ներկայացված թեմային. ծավալվեց քննարկում, եղավ հարց ու պատասխան:

Դասախոսներն անդրադարձան իրենց համագործակցային շրջանակներին, միասին քննարկեցին, թե ինչպես արդյունավետ կերպով այդ շփումը հնարավոր կլինի տեղափոխել կրեդիտային շարժումության ծրագրային հարթակ:

ՀՊՄՀ-ի դասախոսը՝ ոսկե հուշամեդալակիր

Մանկավարժական համալսարանի Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ Ավետյանն Մինասյանը Եվրոպական գիտական և արդյունաբերական կոնսորցիումի որոշմամբ պարգևատրվել է «Եվրոպական որակ» ոսկե հուշամեդալով: Հուշամեդալը շնորհվել է բարձրագույն կրթության բնագավառում Ավետյանն Մինասյանի երկարամյա մանկավարժական գործունեության, «Ինտելեկտուալ հասարակության գիտական և կրթական վիրտուալ տարածք» նախագծի ստեղծման, հրատարակված գիտամեթոդական և գիտագործնական ժողովածուների համար, որոնք ներկայացվել են նաև ուսումնամեթոդական հրապարակումների համառուսական «Հայրենական գիտության ոսկե ֆոնդ» և միջազգային «Կրթական տեխնոլոգիաներ և ծառայություններ» ցուցահանդեսներին՝ կրթական-տեղեկատվական ուղղվածությամբ:

Առաջատար համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում նրա մասնակցությամբ մշակվել են դասագրքեր՝ «Ռուսաց լեզվի դիդակտիկայի ներածություն և միջմշակութային հաղորդակցություն» (Սլովակիա), «Լեզվի կառավարման 12 դասերի ձեռնարկ» (Գերմանիա), Եվրոպական ուսանողների համար կրթական ծրագրեր: Բացի այդ, ՀՊՄՀ-ի դոցենտն իր մասնագիտական ոլորտում եվրոպական համալսարանների հետ համագործակցության շրջանակներում մասնակցել է վիրտուալ գիտական և կրթական 8 նախագծերի:



Ավետյանն Մինասյանն ունի ավելի քան 100 տպագրված գիտական և կրթական աշխատանքներ 18 երկրներում՝ Հայաստան, Արգենտինա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Վրաստան, Հունաստան, Իսպանիա, Հնդկաստան, Ղազախստան, Չինաստան, Լեհաստան, Ռուսաստան, Սլովակիա, ԱՄՆ, Չեխիա, Շվեդիա, Ճապոնիա:

Նշենք, որ «Եվրոպական որակ» ոսկե հուշամեդալը շնորհվում է այն մասնագետներին, որոնք ճանաչվել են իրենց կատարած գիտական և կիրառական հետազոտությունների, ուսումնական ծրագրերի, դասավանդման և հրատարակությունների մեջ ունեցած ձեռքբերումների համար:

Այդ հուշամեդալը շնորհվում է միջազգային հանրության կողմից ճանաչված արտասահմանյան և ռուս գիտնականներին, որոնք նպաստում են գիտության և կրթության զարգացմանը:

Մրցանակի հանդիսավոր հանձնումը կայացել է Մյունխենում՝ «Կրթության և գիտություն առանց սահմանների» միջազգային գիտական ֆորումի ընթացքում:



2015-Ի ԱՆԻՐԱՎԱՐՁ

Օ Մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ «Հոգեբանական հոգեվերլուծության մեջ (կլինիկական դեպքերի դրվագների ներկայացմամբ)» խորագրով դասախոսությամբ հանդես եկավ գերմանացի հայտնի գիտնական, հոգեբույժ, հոգեվերլուծող և հոգեթերապևտ, բժշկագիտության դոկտոր, Միջազգային հոգեվերլուծական ասոցիացիայի անդամ, պրոֆեսոր Յորսթ Կեյսելերը:

Օ Ավանդույթի համաձայն, Մանկավարժական համալսարանի առաջին կուրսերի շուրջ 1200 ուսանողներ Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի՝ Քանաքեռում գտնվող տուն-թանգարանում երդվեցին հավատարիմ մնալ այն կոչմանը, որին կանոնի են հավատարմագրվել:

Օ Հոկտեմբերի 1-ին և 2-ին մեկնարկեց ՀՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի նախաձեռնությամբ, ՀՀ-ի, Գիտության պետական կոմիտեի, Յունիսեֆ Հայաստան կազմակերպության, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան, Տեմպուսի ASPIRE ծրագրի ֆինանսական աջակցությամբ անցկացվող «Ներառական կրթություն. Ժամանակակից հիմնախնդիրներն ու մարտահրավերները» խորագրով միջազգային երկօրյա գիտագործնական գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցեց 100-ից ավելի մասնագետ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ուկրաինայից, Ուկրաինայից, Ֆինլանդիայից, Շվեյցարիայից, Շոտլանդիայից, Չեխիայից, ԱՄՆ-ից. այդ թվում բուհերի պրոֆեսորներ, ներառական հաստատությունների տնօրեններ, բազմամասնագիտական թիմերի անդամներ, ուսուցիչներ, հասարակական կազմակերպությունների, ծառայություններ մատուցող կենտրոնների, կլինիկաների ղեկավարներ ու ներկայացուցիչներ: Գիտաժողովին քննարկվեցին կրթության առաձեռնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց որակյալ կրթության, սոցիալիզացիայի հիմնահարցերը, մարտահրավերները, նախանշվեցին անելիքները՝ հայրենական և միջազգային առաջավոր փորձի հիման վրա:



Մանկավարժական համալսարանի և UNICEF-ի հետ համատեղ անցկացվող «Աղետների ռիսկերի նվազեցման ամրապնդումը ՀՀ-ում ուսումնական պլանում» ծրագրի շրջանակներում առաջին բուժօգ-

Վերապատրաստում

Մանկավարժական համալսարանում մեկնարկել են UNICEF-ի հետ համատեղ իրականացվող «Աղետների ռիսկերի նվազեցման ամրապնդումը ՀՀ-ում ուսումնական պլանում» ծրագրի շրջանակներում վերապատրաստումները, որին մասնակցում է բուհի տարբեր ֆակուլտետների շուրջ 150 դասախոս:

«Ամբողջ աշխարհում իրականացվում են մասնաբաժնի սեմինարներ, դրանք արդիական և հրատապ են, քանի որ աղետների քանակը գնալով մեծանում է, իսկ ռիսկերը, ցավոք, չեն նվազում, այլ հակառակը, շատանում են: Նման սեմինարները կարևոր են, քանզի ապագայում ուսումնական ծրագրերում և ներառվելու են աղետների ռիսկերի նվազեցման բաղադրիչները», - ասաց բուհի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը:

Կարևորելով այս թեմայով վերապատրաստումները՝ առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ Հակոբ Գրիգորյանը նկատեց, որ դրանք հիմնականում ուղղված են աղետներին, արտակարգ ռիսկերի նվազեցմանն ու կանխմանը: «Յուրաքանչյուր մարդ պետք է տեղյակ լինի այդ ամենին, քանզի մեր երկիրը գտնվում է վտանգավոր տարածաշրջանում: Այսօր աշխարհը կանգնած է 3 համաշխարհային պատերազմի շեմին. վերջին իրադարձությունները հենց դրա վառ ապացույց են: Նման վերապատրաստումները պետք է լինեն շարունակական բոլոր ֆակուլտետների դասախոսների համար»:

Հակոբ Գրիգորյանը նշեց նաև, որ վերապատրաստման ընթացքում ներկայացվող բոլոր թեմաները հնարավոր է հրատարակվեն մեկ

Ծանոթացան պաշտպանական կառույցներին

Մուրթյան, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ Հակոբ Գրիգորյանը և ամբիոնի դասախոս, գնդապետ Պերո Կարապետյանը համալսարանի վերապատրաստվող դասախոսների հետ այցելեցին Ա. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտ: Նրանք ծանոթացան պաշտպանական կառույցին, ապաստարանի կառուցվածքին, տեղի սարքավորումներին՝ ստացած տեսական գիտելիքները ամրապնդելով գործնական միջավայրում: Ինստիտուտի մասնագետներն ընդգծեցին տարաբնույթ աղետների և պատերազմական գործողությունների ժամանակ նմանատիպ կառույցների կարևորությունը, տեխնիկական հագեցվածությունը, քաղաքաշտպանության կազմակերպման ձևերը, ապա պատասխանեցին դասախոսներին հետաքրքրող հարցերին:



ամբողջական ուսումնական ձեռնարկի տեսքով, որից էլ հետագայում կկարողանան օգտվել նաև մյուսները:

Վերապատրաստման առաջին օրն ամբիոնի վարիչը ներկայացրեց «Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության առաջին բուժօգնության կազմակերպումը» թեմայով դասախոսությունը:

Համալսարանի՝ ոլորտին առնչվող չորս ամբիոնների փորձագետները սեմինարի ընթացքում ներկայացրին աղետների բնութագիրը, կայուն զարգացման համատեքստում համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրները, աղետների ռիսկերի նվազեցման հոգեբանական հիմունքները, ուսուցչի ԱՌՆ մշակույթի ձևավորման ուղիներն ու միջոցները:

Սոնա ԱՐԱՍՅԱՆ



Խաղ-Մրցույթ վարժարանում

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության բաժնի երրորդ կուրսի ուսանողները հայոց պատմության ամբիոնի դասախոս Արմինե Եփրիկյանի ղեկավարությամբ ուսումնական շարունակական պրակտիկայի շրջանակներում կազմակերպեցին ինտելեկտուալ խաղ-մրցույթ ՀՀ-ի հեռակետային վարժարանում: 10-րդ դասարանների միջև անցկացվող ինտելեկտուալ խաղն ուներ գիտելիքներն ու տրամաբանությունը զարգացնող բնույթ: Խաղին մասնակցող 4 խմբերից մրցակցային փուլերը հաղթահարեցին և հաղթող ճանաչվեցին հունամիտար (ամազոններ) հոսքի աշակերտները:

Միջոցառմանը ներկա էին վարժարանի ուսուցիչները, աշակերտներ, իսկ մրցույթային հանձնաժողովի կազմում էին պատմության և իրավագիտության ֆակուլտետի փոխդեկան Սամվել Պողոսյանը, ԳԹԿ-ի ներկայացուցիչ Արմեն Արյանը, աշխարհագրության ուսուցչուհի Արմինե Արշակյանը: Վերջիններս գոհ էին. խաղն անցկացվեց մրցակցային բարձր ոգով և հաղթական տրամադրությամբ՝ մեկ անգամ ևս ապացուցելով, որ խաղ-մրցույթի միջոցով աշակերտների շրջանակում մեծ հետաքրքրություն առաջացավ պատմություն և աշխարհագրություն առարկաների հանդեպ:

Իրազեկման դաս

Սպիտակի երկրաշարժի 27-րդ տարելիցին ընդառաջ՝ ՀՀ-ի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ ուսանողները հյուրընկալել էին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ծառայության սեյսմիկ ռիսկերի նվազեցման վարչության պետի տեղակալ Կարինե Բարսեղյանին ու Շենքերի-շինությունների սեյսմակայունության բաժնի ղեկավար Արմեն Անտոնյանին:



Հանդիպման ընթացքում մասնագետները ներկայացրին երկրաշարժը, աղետի ընթացքում և հետո անհրաժեշտ վարքականություններն ու կոնկրետ օրինակներով դրանց հետևանքները:

Մասնագետներն ընդգծեցին, որ իրենց նպատակն է ուսուցանել և իրազեկել բնակչությանը՝ անկախ տարիքից: Նման ձեռնարկներ ՏԿԱԻՆ-ն իրականացնում է տարբեր հաստատություններում:

«Ապագա մանկավարժները հատկապես պետք է տիրապետեն այդ հմտություններին, լինեն իրազեկված, որպեսզի իմացածը կարողանան փոխանցել նաև աշակերտներին, իսկ դպրոցահասակ երեխաների մոտ ավելի լավ են ամրապնդվում գիտելիքները», - նշեց Կ. Բարսեղյանն ու հավելեց. «Պետք է վախենալ, սակայն բնական աղետների դեմ ոչինչ անել չենք կարող. լինենք այնքան իրազեկված, որ կարողանանք պաշտպանել մեզ և յուրաքանչյուրին»:

Ջրիստինե ՄԵԼՆՆՅԱՆ



2015-Ի ԱՆՎՐԱԿԱՐԶ

Շրջանակների 22-ից 23-ը Մանկավարժական համալսարանում անցկացվեց ԳՊՄԳ-ի, ՀՀ Գիտության պետական կոմիտեի և Կրթության ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված «Մաթեմատիկական կրթություն» գիտաժողովը: Գիտաժողովում քննարկվեցին հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի ուսուցմանը վերաբերող այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են մաթեմատիկական կրթությունը և արժեքների ձևավորման հիմնախնդիրը, մաթեմատիկայի ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրը մանկավարժական կադրերի պատրաստման երկաստիճան համակարգի պայմաններում, մաթեմատիկական կրթության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները հունանիստական կրթության պայմաններում:

Մանկավարժական համալսարանում կայացավ «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը, որի ընթացքում հայտնի դարձավ 10 ֆակուլտետների լավագույնների լավագույնը: Տոնական միջոցառման ընթացքում խրախուսական նվերներով պարգևատրվեցին բուհի 10 ֆակուլտետների լավագույն ուսանողները, իսկ 2015 թվականի Լավագույն ուսանող ճանաչված կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Գրիգոր Կորկոտյանը՝ Իսպանիա ուղևորությամբ:

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ լրագրող, սցենարիստ Լևոն Գալստյանի և ռեժիսոր Արթուր Բախտանյանի «Չարտասանված Նոբելյան ճառեր» ֆիլմի պրեմիերան, որին ներկա էր նաև ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: «Չարտասանված Նոբելյան ճառեր». ֆիլմ, որտեղ ներկայացվում է արևմտահայ չորս նահատակ մտավորականների՝ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիմանյոնի և Ռուբեն Սևակի եմբարդյալ Նոբելյան ճառերը՝ վավերական հիմքերով:

21-րդ դարում գիտելիքն առաջնային է

Չ1 Դեկան Էդգար Դովհաննիսյանը հրապարակեց օլիմպիադայի ամփոփիչ արդյունքները՝ 2-րդ փուլ անցած աշակերտներին և հաղթողներին հանձնելով գեղջերից օգտվելու հավաստագրեր և նվերներ:

«21-րդ դարում գիտելիքն առաջնային է», -ասաց դեկանը՝ աշակերտներին հորդորելով լավ սովորել և բարձր գիտելիքներ ամբարել:

«Ամեն ինչ կարելի է իմանալ, բայց ոչ սեփական երկրի ու ժողովրդի պատմությունը. դա չափազանց շոյալություն է մե՞նք փոքր երկրի համար, -նկատեց հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանը: - Յուրաքանչյուր սերունդ ավելի լավ է, քան նախորդը. մեր ժողովուրդը ունի ապագա և դա ձեր ձեռքում է»:

Այնուհետև դեկան Է. Դովհաննիսյանը գեղջի հավաստագրեր և

նվերներ հանձնեց օլիմպիադայի 2-րդ փուլ անցած՝ Երևանի տարբեր դպրոցների, այդ թվում և ՀՊՄՀ հենակետային ավագ դպրոց վարժարանի 11-րդ դասարանների մի խումբ աշակերտների, ապա հրապարակեց 11-րդ դասարանիցների մրցություն 1-ին, 2-րդ և 3-րդ տեղ գրաված աշակերտների անունները. Տաթևիկ Արշակյան, Մանե Ծատուրյան, Արփի Շահինյան:

Չեղջային հավաստագրերի արժանացան նաև 12-րդ դասարանների հաղթող աշակերտները, ապա հրապարակվեց առաջին երեք հորիզոնականները գրավածների անունները:

Սամվել Պողոսյանն էլ շնորհավորեց բոլոր հաղթողներին և շնորհակալություն հայտնեց օլիմպիադայի կազմակերպմանն ու անցկացմանն աջակցած ուսանողներին, որոնց ջանքերով նախաձեռնությունը հաջողությամբ պսակվեց:

Սիլվա Ասրյան

Լուսանկարչությունը չբացահայտված աշխարհ է

Կուլտուրայի ֆակուլտետի ճեմասրահն այս անգամ էլ զարդարում է շուրջ 200 բազմաժանր լուսանկար. բնանկար, նատյուրմորտ, դիմանկար, ժանրային նկար և այլն: Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի և ամբիոնի դասախոս Շավարշ Վարդանյանի նախաձեռնությամբ ու դեկավարությամբ օպերատորության 1-ին և 2-րդ կուրսերը հանդես են եկել հետաքրքիր և ինքնատիպ ցուցահանդեսով: Ուսանողների լուսանկարներում իր ողջ գեղեցկությամբ պատկերված է հայկական բնաշխարհը, կոթողներն ու ճարտարապետությունը՝ ՀՀ մարզերից մինչև Լեռնային Ղարաբաղ:

Լուսանկարների ընտրությունը կատարել է կուրսի Շավարշ Վարդանյանը՝ ներառելով ինչպես ուսումնառության կարճ ժամկետում օպերատորության վարպետության հիմունքներ առարկայի շրջանակներում սովորած և լուսանկարներում կիրառած ուսանողների հաջողված աշխատանքները, այնպես էլ նրանց նախկինում ստեղծած հաջողված մի շարք լուսանկարներ:

«Առաջին հերթին հաշվի են առել զաղափարը կադրի ներսում, կոմպոզիցիոն ճիշտ ստեղծված կադրը, լույսի ճիշտ ընտրությունը, օպտիկան և թե ինչպես են նրանք տեսնում երևույթները: Հաշվի առնելով այն, որ լուսանկարների հեղինակները սկսնակ են և դեռևս ոչ փորձառու, ընտրությունը խիստ չի եղել, նրանք դեռ նոր են սովորում», - ասաց կուրսի ղեկավարը:



Շաղթանակները դեռ առջևում են

Բուհի ռեկտոր Ռուբեն Սիրզախանյանն օրերս ընդունեց Հայաստանի բուհերի ուսանողների 16-րդ հանրապետական մարզական խաղերի ծրագրով անցկացվող աղջիկների ֆուտբոլի ֆուտզալի գարնանային և աշնանային մրցաշարի հաղթող թիմին: Ռեկտորը շնորհավորեց հաղթանակի կապակցությամբ և շնորհակալություն հայտնեց համալսարանի հեղինակությունը բարձր պահելու համար, հատկապես, որ այն հեշտությամբ ձեռք չի բերվել: «Հաղթանակը ոչ մի հետաքրքրություն չի առաջացնի, եթե չունենա շարունակական և հեռանկարներ: Մենք ստեղծելու ենք բոլոր հնարավոր պայմանները, որ հաղթանակները զարգացնեն գրանցեն և լինեն շարունակական», -խոստացավ Ռուբեն Սիրզախանյանն ու առաջարկեց թիմի առջև նոր նպատակ դնել՝ մասնակցել այլ մրցաշարերի և, իսկ համալսարանն այդ գործում կցուցաբերի առավելագույն աջակցություն: Հաղթանակի կապակցությամբ ռեկտորը թիմի մարզչին և մասնակիցներին

պարգևատրեց հուշանվերներով և դրամական պարգևով:

«Այս հաղթանակը շատերը ինձ են վերագրում, սակայն դրանում մեծագույն ներդրումը երեխաներին է: Ուսանողների ոգևորության և աշխատասիրության, բուհի դեկավարության պատրաստակամության և աջակցության շնորհիվ են եռապատկեցի մեր մարզումները, ինչն ունեցավ իր սպասված և ցանկալի արդյունքը», -հանդիպման ընթացքում նշեց թիմի մարզիչ Սուրեն Բարսեղյանը՝ խոսելով նաև մեր երկրում և առհասարակ աշխարհում սպորտաձևի դրվածքի, հեռանկարների և մեր թիմի առջև դրված խնդիրների մասին:

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստատձագրերի և հեռուստաֆիլմերի ռեժիսուրա բաժնի, 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Գևորգյանն արդեն 4 տարի է՝ զբաղվում է ֆուտբոլով: Նա խաղացել է կանանց հավաքականում, իսկ այժմ հանդես է գալիս կանանց մրցաշարում: Ուսումնառության ընթացքում, երբ իմացել է համալսարանում գործող

ֆուտբոլի աղջիկների հավաքականի մասին՝ միանգամից ընդգրկվել է և արդեն 2 տարի է խաղում է բուհի աղջիկների ֆուտբոլի հավաքականում:

Մասնագիտությամբ ապագա ռեժիսորը նկատում է՝ ռեժիսորի մասնագիտությունը մասնագիտությունների ամբողջություն է և բնականաբար իրեն շատ է օգնում ֆուտբոլում:

«Հաղթանակի զգացողությունն աննկարագրելի է, դա մեր քրտնազան պարավունքների արդյունքն էր: Հաղթանակի հաջողությունը թիմային ոգու և միասնականության մեջ է», - ասաց Անին:

Հայրափի Կարեյանն էլ մասնագիտությամբ ապագա լուսանկարիչ է: 6 տարի է զբաղվում է ֆուտբոլով, որից 2 տարին՝ համալսարանի աղջիկների հավաքականում: Այս խաղին վնասվածքի պատճառով հանդես է եկել որպես առաջին դարպասապահ և գոհ է իր և ընկերների ցուցաբերած արդյունքից:

«Հրաշալի զգացում էր, երբ հաղթեցինք, նման բան դեռևս չի զգացել, խմբակային ցանկացած սպորտ մարդուն բավականին լավ հատկանիշներ է տալիս՝ փոխվում է հոգեբանությունը, ձեռք ես բերում անձնային դրական հատկանիշներ», - ասաց Հայրափին:



